**«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ - ՀԱՅԱՍՏԱՆ»**
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**MILLENNIUM CHALLENGE ACCOUNT - ARMENIA**
STATE NON-COMMERCIAL ORGANIZATION

ՀՄՀ – 2693
27 ապրիլի 2010թ.

Հայաստանի Հանրապետության Վարչապետ,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի կառավարման
խորհրդի նախագահ պարոն Տիգրան Սարգսյանին

Մեծարգո պարոն Վարչապետ,

Հաշվի առնելով ներկայացվող հարցի հրատապությունը՝ հարցման կարգով Ձեր ուշադրությանն ու ստորագրմանն եմ ներկայացնում «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի N 51 արձանագրությունը՝ կից փաստաթղթերով:

Առդիր՝ 6 թերթ:

Հարգանքով՝

Գլխավոր գործադիր տնօրեն՝ Արա Հովսեփյան

52

Հ.Հ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
[illegible]
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 02/-9086
28 — 04 — 10

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Մելիք Ադամյան փող. 2/1
2/1 Melik Adamyan Str., 0010 Yerevan, Republic of Armenia
Հեռ./Tel.: (374 10) 547988, 546819, ֆաքս/fax: (374 10) 547986

# Տեղեկանք

## «Երրորդ կարգի ջրանցքների վերականգնում (Փաթեթ II), երեք լոտ» IA/CB/CW-08/006 մրցույթի արդյունքների և պայմանագրի նախագծի վերաբերյալ

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում նախատեսված է Երրորդ կարգի ջրանցքների վերականգնման ենթաբաղադրիչը, որը նպատակաուղղված է Արարատ, Արմավիր, Արագածոտն, Կոտայք, Գեղարքունիք, Շիրակ, Լոռի, Տավուշ, Սյունիք և Վայոց Ձոր մարզերի թվով ութսունհինգ /85/ շահառու համայնքներում ջրի մատակարարման բարելավմանը և աղքատության նվազեցմանը՝ համայնքային ոռոգման ցանցի վերականգման կամ կառուցման միջոցով:

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ն իրականացրել է միջազգային սակարկություն, որին մասնակցել են հետևյալ ընկերությունները.

1. «Բաղրամյանշին» ԲԲԸ (Հայաստան), որի ընթերցված գինն է 6,430,105.39 ԱՄՆ դոլար Լոտ 2-ի համար,

2. «Ռեսուրսէներգոպրոմ» ՍՊԸ (Ռուսաստանի Դաշնություն), որի ընթերցված գինն է 3,991,323 ԱՄՆ դոլար Լոտ 1-ի համար, 4,550,910 ԱՄՆ դոլար Լոտ 2-ի համար, 3,514,113 ԱՄՆ դոլար Լոտ 3-ի համար,

3. «Լյուդվիգ Պֆայֆեր Հոք ունդ Տիֆբաու» ՍՊԸ (Գերմանիա) համատեղ «Երևան Ջրշին» ՓԲԸ (Հայաստան) և «Կորպորատիվ Ջրշին» ՍՊԸ (Հայաստան) կոնսորցիում, որի ընթերցված գինն է 1,912,682,838 ՀՀ դրամ Լոտ 1-ի համար, 1,436,487,289 ՀՀ դրամ Լոտ 3-ի համար,

4. «Լյուդվիգ Պֆայֆեր Հոք ունդ Տիֆբաու» ՍՊԸ (Գերմանիա), որի ընթերցված գինն է 2,260,309,866 ՀՀ դարմ Լոտ 2-ի համար,

5. «Էներգացանցշին» ԲԲԸ (Հայաստան) համատեղ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ (Հայաստան) կոնսորցիում, որի ընթերցված գինն է 2,074,043,147 ՀՀ դրամ Լոտ 3-ի համար,

6. «Արարատ Ճանշին» ՍՊԸ (Հայաստան), որի ընթերցված գինն է 2,817,229,693 ՀՀ դրամ Լոտ 1-ի համար,

7. «Աստղիկ-5» ՍՊԸ (Հայաստան), որի ընթերցված գինն է 1,783,635,949 ՀՀ դրամ Լոտ 3-ի համար,

8. «ՇՄՇ-23» ԲԲԸ (Հայաստան) համատեղ «Սպիտակ-1» ԲԲԸ (Հայաստան) կոնսորցիում, որի ընթերցված գինն է 1,959,898,049 ՀՀ դրամ Լոտ 1-ի համար,

9. «Քորթիիլ Կորպորացիա հայաստանյան մասնաճյուղ» (Բրիթիշ Վիրջին կղզիներ), որի ընթերցված գինն է 4,529,756 ԱՄՆ դոլար Լոտ 1-ի համար, 6,534,591.80 ԱՄՆ դոլար Լոտ 2-ի համար, 4,333,197 ԱՄՆ դոլար Լոտ 3-ի համար,

10. «Սպիտակ-1» ԲԲԸ (Հայաստան), որի ընթերցված գինն է 2,323,726,147 ՀՀ դրամ Լոտ 2-ի համար,

11. «Զարուբեժվոդստրոյ» ԲԲԸ (Ռուսաստանի Դաշնություն), որի ընթերցված գինն է 6,441,377.85 ԱՄՆ դոլար Լոտ 1-ի համար, 7,894,408.65 ԱՄՆ դոլար Լոտ 2-ի համար, 5,516,929.73 ԱՄՆ դոլար Լոտ 3-ի համար,

12. «Շինաշխարհ» ՍՊԸ (Հայաստան) համատեղ «Եղվարդշին» ԲԲԸ կոնսորցիում, որի ընթերցված գինն է 3,093,935,126 ՀՀ դրամ Լոտ 2-ի համար:

Ընդհանուր առմամբ, տվյալ մրցույթի համար ՀՄՀ-Հայաստանը ստացել է 19 հայտ տեղական և միջազգային ընկերությունների կողմից, այդ թվում 6 հայտ Լոտ 1-ի համար, 7 հայտ Լոտ 2-ի համար և 6 հայտ Լոտ 3-ի համար:

Մրցութային հայտերը գնահատվել են Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի կողմից հաստատված գնահատող հանձնաժողովի կողմից: Գնահատող հանձնաժողովի անդամներն են.

Աքսել Բրաքսեյն - ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր տեխնիկական խորհրդատու

Բաբկեն Մնացականյան - ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր ֆինանսական ղեկավար

Աշոտ Քոչարյան - ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ոռոգման ենթակառուցվածքի շինարար-ճարտարագետ

Տիգրան Օգանեզով - ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի բնապահպանության և սոցիալական ազդեցության գնահատման մասնագետ

Պարույր Ասատրյան - ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի Համայնքների զարգացման մասնագետ (առանց քվեարկության ձայնի իրավունքի)

Լոտ 1-ի գնահատման արդյունքում պարզվել է, որ «Ռեսուրսէներգոպրոմ» ՍՊԸ, «Լյուդվիգ Պֆայֆեր Հոք ունդ Տիֆբաու» ՍՊԸ համատեղ «Երևան Զրշին» ՓԲԸ և «Կորպորատիվ Զրշին» ՍՊԸ կոնսորցիումը, ինչպես նաև «Արարատ Ճանշին» ՍՊԸ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը անընդունելի են գնահատման հանձնաժողովի անդամների համար, քանի որ չեն համապատասխանում մրցութային փաստաթղթերի պահանջներին: Մասնավորապես՝

1. «Ռեսուրսէներգոպրոմ» ՍՊԸ–ի տեխնիկական առաջարկը ընդունելի չէր հետևյալ պատճառներով՝
   - աշխատանքային պլանում ոռոգման սեզոնը հաշվի չէր առնվել, իսկ փորձարկումը նախատեսված էր ձմռանը;
   - կազմակերպությունը չէր ներկայացրել մրցութային փաթեթով պահանջվող Հատուկ Շինարարական Փորձ,
   - ֆինանսական ցուցանիշները չէին համապատասխանում ՀՄԿ-ի կողմից հաստատված ցուցանիշներին:

2. «Լյուդվիգ Պֆայֆեր Հոք ունդ Տիֆբաու» ՍՊԸ համատեղ «Երևան Ջրշին» ՓԲԸ և «Կորպորատիվ Ջրշին» ՍՊԸ կոնսորցիումի տեխնիկական առաջարկը ընդունելի չէր հետևյալ պատճառով՝

   - աշխատանքային գրաֆիկը լրացված չէր,
   - շինարարական աշխատանքների ընտրված մեթոդում 8 պահանջված կետերից 7-ը չեն համապատասխանում մրցութային փաթեթի պահանջներին:

3. «Արարատ Ճանշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական առաջարկը, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական կառավարման պլանը, առողջության և անվտանգության համար անհրաժեշտ փաստաթղթերն ընդհանրապես ներկայացված չէին:

Լոտ 1-ի՝ մնացած երեք ընկերությունների/կոնսորցիումների կողմից ներկայացված հայտերը ընդունելի են: Դրանք են.

1) «Քորթիիլ Կորպորացիա հայաստանյան մասնաճյուղ» (թվաբանական սխալների ստուգման և ծավալաթերթում համապատասխան ուղղում կատարելու արդյունքում հայտի արժեքը ավելացել է 204,105.91 ԱՄՆ դոլարով և կազմել է 4,733,862.69 ԱՄՆ դոլար),
2) «ՇՄՇ-23» ԲԲԸ համատեղ «Սպիտակ-1» ԲԲԸ կոնսորցիում (թվաբանական սխալների ստուգման և ծավալաթերթում համապատասխան ուղղում կատարելու արդյունքում հայտի արժեքը ավելացել է 225,328,853 ՀՀ դրամով և կազմել է 2,185,226,902 ՀՀ դրամ՝ 5,682,703.76 ԱՄՆ դոլարին համարժեք) և
3) «Զարուբեժվոդստրոյ» ԲԲԸ (թվաբանական սխալների ստուգման և ծավալաթերթում համապատասխան ուղղում կատարելու արդյունքում հայտի արժեքը նվազել է 70,962.61 ԱՄՆ դոլարով և կազմել է 5,763,670.41 ԱՄՆ դոլար):

Նշված երեք կոնսորցիումների / ընկերությունների հայտերը, այդ թվում շինարարական փորձառության վերաբերյալ տեղեկատվությունը, անհրաժեշտ սարքավորումների ցանկը, բնապահպանական և սոցիալական կառավարման պլանը, առողջության և անվտանգության համար անհրաժեշտ փաստաթղթերը պատշաճ ձևով ներկայացված են: Արդյունքում, գնահատող հանձնաժողովի անդամները միաձայն որոշում

են ընդունել Լոտ 1-ի համար հաղթող ճանաչել մրցութային փաստաթղթերի պահանջներին համապատասխանող և նվազագույն գին առաջարկած՝ **«Քորթիիլ Կորպորացիա հայաստանյան մասնաճյուղ» ընկերությանը (Բրիթիշ Վիրջին կղզիներ)՝ 4,733,862.69 ԱՄՆ դոլար** ընդհանուր արժեքով:

Լոտ 2-ի գնահատման արդյունքները ցույց են տվել, որ «Ռեսուրսէներգոպրոմ» ՍՊԸ, «Լյուդվիգ Պֆայֆեր Հոք ունդ Տիֆբաու» ՍՊԸ և «Բաղրամյանշին» ԲԲԸ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը անընդունելի են գնահատման հանձնաժողովի անդամների համար, քանի որ չեն համապատասխանում մրցութային փաստաթղթերի պահանջներին:
Մասնավորապես՝

1. «Ռեսուրսէներգոպրոմ» ՍՊԸ–ի տեխնիկական առաջարկը ընդունելի չէր հետևյալ պատճառներով՝
   - աշխատանքային պլանում ոռոգման սեզոնը հաշվի չէր առնվել, իսկ փորձարկումը նախատեսված էր ձմռանը;
   - կազմակերպությունը չէր ներկայացրել մրցութային փաթեթով պահանջվող Հատուկ Շինարարական Փորձ,
   - ֆինանսական ցուցանիշները չէին համապատասխանում ՀՄԿ-ի կողմից հաստատված ցուցանիշներին:

2. «Լյուդվիգ Պֆայֆեր Հոք ունդ Տիֆբաու» ՍՊԸ-ի տեխնիկական առաջարկը ընդունելի չէր հետևյալ պատճառով՝
   - կազմակերպությունը չէր ներկայացրել մրցութային փաթեթով պահանջվող Հատուկ Շինարարական Փորձ,
   - աշխատանքային գրաֆիկը ընդունելի չէր,
   - շինարարական աշխատանքների ընտրված մեթոդում 8 պահանջված կետերից 7-ը չեն համապատասխանում մրցութային փաթեթի պահանջներին:

3. «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական առաջարկը, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական կառավարման պլանը, առողջության և անվտանգության համար անհրաժեշտ փաստաթղթերն ընդհանրապես ներկայացված չէին:

Լոտ 2-ի մնացած չորս ընկերությունների / կոնսորցիումների տեխնիկական առաջարկները, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական կառավարման պլանը, առողջության և անվտանգության համար անհրաժեշտ փաստաթղթերը վավեր են ճանաչվել: Դրանք են.
1) «Սպիտակ-1» ԲԲԸ (թվաբանական սխալների ստուգման և ծավալաթերթում համապատասխան ուղղում կատարելու արդյունքում հայտի արժեքը նվազել է 3,094,497.21 ՀՀ դրամով և կազմել է 2,320,631,649.79 ՀՀ դրամ՝ 6,034,825 ԱՄՆ դոլարին համարժեք),
2) «Քորթիիլ Կորպորացիա հայաստանյան մասնաճյուղ» (թվաբանական սխալների ստուգման և ծավալաթերթում համապատասխան ուղղում կատարելու արդյունքում հայտի արժեքը նվազել է 166,838.52 ԱՄՆ դոլարով և կազմել է 6,367,753.28 ԱՄՆ դոլար),
3) «Զարուբեժվոդստրոյ» ԲԲԸ (թվաբանական սխալների ստուգման և ծավալաթերթում համապատասխան ուղղում կատարելու արդյունքում հայտի արժեքը ավելացել է 20,073.77 ԱՄՆ դոլարով և կազմել է 7,035,318.93 ԱՄՆ դոլար),
4) «Շինաշխարհ» ՍՊԸ (թվաբանական սխալների ստուգման և ծավալաթերթում համապատասխան ուղղում կատարելու արդյունքում հայտի արժեքը նվազել է 2,661,508 ՀՀ դրամով և կազմել է 3,090,943,618 ՀՀ դրամ՝ 8,038,028 ԱՄՆ դոլարին համարժեք):

Արդյունքում, գնահատող հանձնաժողովի անդամները միաձայն որոշում են ընդունել Լոտ 2-ի համար հաղթող ճանաչել մրցութային փաստաթղթերի պահանջներին համապատասխանող և նվազագույն գին առաջարկած՝ **«Սպիտակ-1» ԲԲԸ-ն (Հայաստան)՝ 2,320,631,649.79 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, որը համարժեք է 6,034,825 ԱՄՆ դոլարին:**

Լոտ 3-ի գնահատման արդյունքում պարզվել է, որ «Ռեսուրսէներգոպրոմ» ՍՊԸ, «Լյուդվիգ Պֆայֆեր Հոք ունդ Տիֆբաու» ՍՊԸ համատեղ «Երևան Զրշին» ՓԲԸ և «Կորպորատիվ Զրշին» ՍՊԸ կոնսորցիումը, ինչպես նաև «Աստղիկ-5» ՍՊԸ ընկերությունների կողմից ներկայացված հայտերն անընդունելի են գնահատման հանձնաժողովի անդամների համար, քանի որ չեն համապատասխանում մրցութային փաստաթղթերի պահանջներին:

Մասնավորապես՝

1. «Ռեսուրսէներգոպրոմ» ՍՊԸ–ի տեխնիկական առաջարկն ընդունելի չէր հետևյալ պատճառով՝
   - աշխատանքային պլանում ոռոգման սեզոնը հաշվի չէր առնվել, իսկ փորձարկումը նախատեսված էր ձմռանը;
   - կազմակերպությունը չէր ներկայացրել մրցութային փաթեթով պահանջվող Հատուկ Շինարարական Փորձ,
   - ֆինանսական ցուցանիշները չէին համապատասխանում ՀՄԿ-ի կողմից հաստատված ցուցանիշներին:

2. «Լյուդվիգ Պֆայֆեր Հոք ունդ Տիֆբաու» ՍՊԸ համատեղ «Երևան Ջրշին» ՓԲԸ և «Կորպորատիվ Ջրշին» ՍՊԸ կոնսորցիումի տեխնիկական առաջարկը ընդունելի չէր հետևյալ պատճառով՝
   - աշխատանքային գրաֆիկը լրացված չէր,
   - շինարարական աշխատանքների ընտրված մեթոդում 8 պահանջված կետերից 7-ը չեն համապատասխանում մրցութային փաթեթի պահանջներին:

3. «Աստղիկ-5» ՍՊԸ-ն չէր ներկայացրել մրցութային երաշխիք և հայտը մերժվել է:

Լոտ 3-ի համար մնացած երեք ընկերությունների / կոնսորցիումների կողմից ներկայացված տեխնիկական առաջարկները, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական կառավարման պլանը, առողջության և անվտանգության համար անհրաժեշտ փաստաթղթերը վավեր են ճանաչվել: Վերոհիշյալ երեք ընկերություններ / կոնսորցիումներն են.

1) «Քորթիիլ Կորպորացիա հայաստանյան մասնաճյուղ» (թվաբանական սխալների ստուգման և ծավալաթերթում համապատասխան ուղղում կատարելու արդյունքում հայտի արժեքը ավելացել է 202,513.50 ԱՄՆ դոլարով և կազմել է 4,535,710.56 ԱՄՆ դոլար),

2) «Զարուբեժվոդստրոյ» ԲԲԸ (թվաբանական սխալների ստուգման և ծավալաթերթում համապատասխան ուղղում կատարելու արդյունքում հայտի արժեքը նվազել է 30,496.16 ԱՄՆ դոլարով և կազմել է 4,993,210.33 ԱՄՆ դոլար),

3) «Էներգացանցշին» ԲԲԸ համատեղ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ կոնսորցիում (թվաբանական սխալների ստուգման և ծավալաթերթում համապատասխան ուղղում կատարելու արդյունքում հայտի արժեքը

ավելացել է 18,079,779.05 ՀՀ դրամով և կազմել է 2,092,122,926.05 ՀՀ դրամ, որը համարժեք է 5,440,585.96 ԱՄՆ դոլարին):

Ուստի, գնահատող հանձնաժողովի անդամները միաձայն որոշում են ընդունել Լոտ 3-ի համար հաղթող ճանաչել մրցութային փաստաթղթերի պահանջներին համապատասխանող և նվազագույն գին առաջարկած՝ **«Քորթիիլ Կորպորացիա հայաստանյան մասնաճյուղ» ընկերությունը (Բրիթիշ Վիրջին կղզիներ)՝ 4,535,710.56 ԱՄՆ դոլար** ընդհանուր արժեքով:

«Երրորդ կարգի ջրանցքների վերականգնում (Փաթեթ II)» երեք լոտերի գնահատման արդյունքներից ելնելով պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմում է 15,304,398,.37 ԱՄՆ դոլար: ՀՄՀ-Հայաստան ծրագրի հաստատված գնումների պլանով նախատեսված էր 13,757,743 ԱՄՆ դոլար ընդհանուրը 92 համայնքների դիմաց: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ յոթ համայնքներ՝ 1,959,287 ԱՄՆ դոլար ընդհանուր նախնական արժեքով, հրաժարվել են ծրագրին մասնակցելուց և մրցութային փաստաթղթերի պայմանները թույլ են տալիս աշխատանքների ծավալների մինչև 30%-ի կրճատում, ապա այժմ **պայմանագրերի ընդհանուր արժեքը կկազմի 13,345,111 ԱՄՆ դոլար**:

Շինարարական աշխատանքների տևողությունն է մինչև 2011թ. հուլիս ամիսը: Աշխատանքները կմեկնարկեն պայմանագրի կնքման օրվանից հետո 7 օրվա ընթացքում՝ ջրօգտագործողների ընկերությունների կողմից վերականգնման արժեքի ամբողջ 15%-ի չափով համաֆինանսավորումը ապահովելու դեպքում: Վերջինիս համար ՀՄՀ-Հայաստանը նախատեսում է սահմանել համաֆինանսավորման գումարների փոխանցման վերջնաժամկետ ս.թ. հունիսի 1-ը: Աշխատանքները կիրականացվեն Կապալառուի կողմից տրամադրված և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից հաստատված աշխատանքային պլանի համաձայն:

Վճարումները Կապալառուներին կիրականացվեն փաստացի կատարված շինարարության ծավալների հիման վրա՝ հիմք ընդունելով մրցույթի ընթացքում Կապալառուի կողմից ներկայացված աշխատանքների և նյութերի մեկ միավոր գները: Փաստացի կատարված

աշխատանքները կընդունվեն շինարարական աշխատանքները վերահսկող կազմակերպության կողմից:

Կապալառուներին կվճարվի կանխավճար՝ պայմանագրի պայմանական արժեքի 15%-ի չափով: Շինարարական աշխատանքների ավարտից հետո թերությունների վերացման նպատակով յուրաքանչյուր վճարումից կպահվի գումար՝ վճարվող գումարի 10%-ի չափով: Թերությունների վերացման ժամանակահատվածի տևողությունը 12 ամիս է՝ շինարարական աշխատանքների ավարտից հետո:

Գնահատման հաշվետվությունը ներկայացվել և հաստատվել է Հազարամյակի Մարտահրավեր Կորպորացիաի կողմից ս.թ. ապրիլի 21-ին: ՀՄՀ-Հայաստանը կապալառու ընկերություններին կուղարկի գնային հայտի ընդունման գրություն, որին կկցվի նաև պայմանագրի նախագիծը՝ Կառավարման խորհրդի կողմից վերջինս հաստատելուց հետո:

*Պարունակում է մրցութային գաղտնիք*

Արձանագրություն 51

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի

2010 թվականի ապրիլի 27-ի հարցման կարգով նիստի

Ելնելով ծրագրով նախատեսված ժամկետներում ներքոհիշյալ ծառայությունների իրականացման անհրաժեշտությունից՝ Կառավարման խորհուրդը 2010 թվականի ապրիլի 27-ին հարցման կարգով ***քննարկեց.***

1. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում «Երրորդ կարգի ջրանցքների վերականգնում (Փաթեթ II)» մրցույթի արդյունքները և պայմանագրի նախագիծը (տեղեկանքը կցվում է):

***Որոշեց.***

**Հաստատել՝**

1. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում «Երրորդ կարգի ջրանցքների վերականգնում (Փաթեթ II)»մրցույթի արդյունքները և պայմանագրի նախագիծը:

| | |
|---|---|
| Տիգրան Սարգսյան | ՀՀ վարչապետ, կառավարման խորհրդի նախագահ |
| Արմեն Գևորգյան | ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար |
| Վահրամ Ներսիսյանց | ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, կառավարման խորհրդի փոխնախագահ |
| Ներսես Երիցյան | ՀՀ էկոնոմիկայի նախարար |
| Տիգրան Դավթյան | ՀՀ ֆինանսների նախարար |
| Մանուկ Վարդանյան | ՀՀ տրանսպորտի և կապի նախարար |
| Գերասիմ Ալավերդյան | ՀՀ գյուղատնտեսության նախարար |
| Արման Ոսկանյան | «Տավուշի զարգացման» ՀԿ-ի ներկայացուցիչ |
| Պողոս Շահինյան | «Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ |

| | |
|---|---|
| Վիկտոր Ենգիբարյան | «Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ի նախագահ |
| Կարեն Զադոյան | «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ |
| Շիրակ Միքայելյան | «Աշխատանք և հայրենիք» ՀԿ-ի լիազոր ներկայացուցիչ |
| *Ն.Մարտիրոսյան* | *«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման խորհրդի քարտուղար* |